Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 781 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԶԲՈՍԱՅԳՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է վերակառուցել 1988 թվականին երկրաշարժի հետևանքով վնասված քաղաքային «Բարեկամության» զբոսայգին, ապահովել Գյումրի քաղաքի բնակիչներին զբոսանքի և ժամանցի համար բարենպաստ պայմաններով, Գյումրի քաղաքի երիտասարդների, ինչպես նաև հարակից տարածքում գտնվող մանկական հիվանդանոցի երեխաների համար ստեղծել բարենպաստ պայմաններ՝ կառուցելով հարմարավետ և հետիոտնի համար հաճելի զբոսանքի արահետներ, նպաստել Հայաստանի 2-րդ քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացմանը, Գյումրի քաղաքի բնականոն զարգացմանը՝ ստեղծելով սոցիալական հարթակ հասարակության լայն զանգվածների համար: Զբոսայգու վերականգնումը կնպաստի քաղաքաշինության լայնածավալ զարգաց-մանը՝ մոտակա շրջանները պատմական կենտրոնի հետ ինտեգրելու հարցում և հարևան բնակավայրերի քաղաքացիներին շփման հարթակ ստեղծելու համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Զբոսաշրջության և քաղաքաշինության բարեգործական հիմնադրամ

4.	Ծրագիրը կատարողը	Զբոսաշրջության և քաղաքաշինության բարեգործական հիմնադրամ Իրավաբանական հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, 0019, Բաղրամյան պողոտա 6, ՀՎՀՀ՝ 02628286
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, քաղաք Գյումրի Բնագավառը՝ սոցիալական, այդ թվում՝ բնության և շրջակա միջավայրի պահպանում և բարեկարգում
6.	Ծրագրի բյուջեն	2,885,223,071 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Գյումրի քաղաքի բնակիչները և այցելուները, «Բարեկամության» զբոսայգու տարածքին կից գործող մանկական հիվանդանոցի այցելուներն ու այնտեղ բուժում ստացող պացիենտները, Հայաստանի Հանրապետություն այցելող զբոսաշրջիկները, այգու տարածքում և առևտրային տարածքներում աշխատողները
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	«Գյումրի քաղաքի բարեկամության զբոսայգու վերականգնման և զարգացման» ծրագիր, որը ներկայացված է 2023 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար:
		1. Նախագծման, պլանավորման և այլ մասնագիտական աշխատանքների իրականացում, գնահատված ծախսեր՝ 80,000,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել շինարարության ընթացքում հեղինակային և տեխնիկական հսկողություն, իրականացված ճարտարապետաշինարարական փաթեթների և էսքիզների շտկում, նոր փաթեթների նախագծում: Իրականացման ժամկետն է՝ 2023 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
		2. Հողային աշխատանքներ, գնահատված ծախսեր՝ 100,900,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել տարածքի հարթեցման, հողի մշակման և հետլիցքի, ինչպես նաև նոր հողի տեղափոխման աշխատանքներ, այգու

	հասարակական օբյեկտների շինարարության համար նախատեսված գրունտային հողի հետ կապված աշխատանքներ: Իրականացման ժամկետն է՝ 2023 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
	3. Ինժեներական ենթակառուցվածքներ, գնահատված ծախսեր՝ 150,000,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել կաթիլային ոռոգման համակարգի, զբոսայգու հարակից փողոցով անցնող գազատար խողովակի վերակառուցման և արդիականացման, ինչպես նաև արտաքին լուսավորության անցկացման աշխատանքներ: Իրականացման ժամկետն է՝ 2023 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
	4. Առկա շինություններ, գնահատված ծախսեր՝ 300,000,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել այգու սպասարկման օբյեկտների շինարարություն, հին բեմահարթակի վերանորոգման և ամրացման աշխատանքներ: Իրականացման ժամկետն է՝ 2023 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
	5. Բարեկարգման աշխատանքներ, գնահատված ծախսեր՝ 300,000,000 դրամ, որից 150,000,000 դրամը ներմուծվող ծառատեսակների և այլ տնկիների համար, 150,000,000 դրամը՝ տեղում բարեկարգման և առկա շուկայից բույսերի և տնկիների ձեռքբերում: Նախատեսվում է սպորտային, վազքի և հեծանվային ուղիների մշակում, ջրային մակերևույթների ստեղծում և կանաչապատման ու ծառատունկի աշխատանքներ: Իրականացման ժամկետն է՝ 2023 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:

	6. Այգու տարածքում տեղադրվող զվարճահարմարանքների (կարուսելների) և այլ մանկական, երիտասարդական սարքավորումների ներմուծում և պահեստավորում, զվարճահարմարանքների (կարուսելների) և այլ մանկական և երիտասարդական սարքավորումների տեխնիկական զննման, արտաքին տեսքի արդիականացման և բարելավման, այգում տեղադրման (մոնտաժման) աշխատանքներ, գնահատված ծախսեր՝ 100,000,000 դրամ, որից 70,000,000 դրամը զվարճահարմարանքների (կարուսելների) և այլ մանկական, երիտասարդական սարքավորումների ներմուծման համար, 30,000,000 դրամը՝ պահեստավորման, սարքավորումների տեխնիկական զննման, արտաքին տեսքի արդիականացման, բարելավման, տեղադրման (մոնտաժման) աշխատանքների համար: Նախատեսվում է մանկական և երիտասարդական զվարճահարմարանքների (կարուսելների) և այլ սարքավորումների ներմուծում և պահեստավորում, մինչև տեղադրման աշխատանքների սկիզբը: Իրականացման ժամկետն է՝ 2023 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
	7. Շարժական գույքերի և հասարակական կառույցների վերանորոգման, ընթացիկ սպասարկման ծառայություններ, գնահատված ծախսեր՝ 60,000,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել այգու տարածքում գործող հասարակական զուգարանի և տրանսֆորմատորային ենթակայանի, ինչպես նաև սպասարկման այլ կառույցների ընթացիկ տեխնիկական զննում, վերանորոգում և սպասարկում: Իրականացման ժամկետն է՝ 2023 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:

	8. Այգու 7.2 հա հողամասի նկատմամբ կառուցապատման իրավունքի ձեռքբերում՝ հանրային հողերի վարձակալություն, գնահատված ծախսեր՝ 6,722,500 դրամ: Նախատեսվում է շարունակել հողի կառուցապատման իրավունքի վարձակալությունը, հանրային հողերի վարձակալությունը: Իրականացման ժամկետն է՝ 2023 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
	9. Այգու ադմինիստրատիվ կենտրոնի կառուցում, գնահատված ծախսեր՝ 200,000,000 դրամ, որից 70,000,000 դրամը ներմուծվող սարքավորումների և նյութերի համար, 130,000,000 դրամը՝ շինարարական աշխատանքների համար: Նախատեսվում է կառուցել այգու օբյեկտների, բուսականության սպասարկման համար ադմինիստրատիվ կենտրոն: Իրականացման ժամկետն է՝ 2023 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
	10. Արհեստական լճակի կառուցում, գնահատված ծախսեր՝ 80,000,000 դրամ: Այգու հիմնական ջրային մակերևույթի նպատակի համար նախատեսվում է կառուցել հասարակական լճակ: Իրականացման ժամկետն է՝ 2023 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
	11. Բացօթյա սպորտային հանգստի գոտու կառուցում, սպորտային մարզանքների սարքավորումների ներմուծում և տեղադրում, ընթացիկ վերանորոգում, գնահատված ծախսեր՝ 150,000,000 դրամ, որից 75,000,000 դրամը ներմուծվող ապրանքների և նյութերի համար, 75,000,000 դրամը՝ շինարարական աշխատանքների համար:

	Նախատեսվում է իրականացնել հասարակական սպորտային բացօթյա հրապարակ հատուկ կարիքներով անձանց համար նախատեսված մարզային սարքերով և այլ մարզաձևերի համար նախատեսված կահավորանքով: Իրականացման ժամկետն է՝ 2023 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
	12. Այգեգործական դպրոցի կառուցում հասարակական և կրթական հիմունքներով, գնահատված ծախսեր՝ 200,000,000 դրամ, որից 100,000,000 դրամը ներմուծվող սարքավորումների համար, 100,000,000 դրամը՝ տեղում շինարարական աշխատանքների համար: Ձրոսայգու կանաչապատման և Գյումրի քաղաքի կանաչապատման համար նախատեսված և կրթական ծրագրերով հագեցած կրթական համալիրի կառուցում և ընթացիկ սպասարկում: Իրականացման ժամկետն է՝ 2023 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
	13. Երիտասարդական քովորքինգ կենտրոնի կառուցում, շինարարական և սպասարկման աշխատանքներ, գնահատված ծախսեր՝ 250,000,000 դրամ: Իրականացման ժամկետն է՝ 2023 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
	14. Արվեստների և արհեստների բազմաֆունկցիոնալ կենտրոնի կառուցում, շինարարական և վերանորոգման աշխատանքներ, գնահատված ծախսեր՝ 250,000,000 դրամ, որից 50,000,000 դրամը ներմուծվող ապրանքների և սարքավորումների համար, 200,000,000 դրամը՝ շինարարական աշխատանքների համար: Իրականացման ժամկետն է՝ 2023 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:

	15. Մանկական հասարակական խաղային գոտու կառուցում, խաղային օբյեկտների ներմուծում և տեղադրում, գնահատված ծախսեր՝ 200,000,000 դրամ, որից 130,000,000 դրամը ներմուծվող սարքավորումների և նյութերի համար, 70,000,000 դրամը՝ շինարարական աշխատանքների համար: Իրականացման ժամկետն է՝ 2023 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
	16. Այգու հանդիսավոր բացման, ներկայացուցչական ծախսեր, գնահատված ծախսեր՝ 100,500,000 դրամ, որից 50,000,000 դրամը ներմուծվող տեխնիկական և այլ սարքավորումների համար: Իրականացման ժամկետն է՝ 2023 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
	17. Հանրային իրազեկման և մարքեթինգային ծախսեր, տպագրական և դիզայներական ծառայություններ, այդ թվում՝ բուկլետների, այցեքարտերի, տոմսերի, հրավիրատոմսերի, հուշանվերների և այլ փաստաթղթերի գնում, տպագրություն և ձևավորում, լուսանկարահանման և տեսանկարահանման ծառայություններ, գնահատված ծախսեր՝ 50,000,000 դրամ: Իրականացման ժամկետն է՝ 2023 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
	18. Խորհրդատվական ծառայություններ, այդ թվում՝ իրավաբանա-կան, հաշվապահական, թարգմանչական և մասնագիտական, ներառյալ, սակայն չսահմանափակվելով՝ աուդիտորական, հետազոտական և այլ համանման ծառայություններ, գնահատված ծախսեր՝ 28,000,000 դրամ: Իրականացման ժամկետն է՝ 2023 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
	19. Աշխատավարձի և ֆիզիկական անձանց կողմից ծառայությունների մատուցման գծով ծախսեր, այդ թվում՝ վարչական աշխատակազմի, գիտական ու

	տեխնոլոգիական մասնագետների աշխատավարձ, ինչպես նաև քաղաքացիաիրավական ծառայություններ, գնահատված ծախսեր՝ 161,536,000 դրամ: Իրականացման ժամկետն է՝ 2023 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
	20. Տարածքների (ապրանքանյութական արժեքների պահեստավորման համար), գրասենյակների (վարչական աշխատակազմի և գիտական և տեխնոլոգիական ոլորտի մասնագետների աշխատանքների համար), դրանց վերանորոգման, դիզայնի, կահավորման, ներքին հարդարման աշխատանքներ: Գրասենյակային գույքի, սարքավորումների ձեռքբերում, պահնորդային, մաքրության և այլ տեխնիկական-մասնագիտական ծառայություններ, կոմունալ վճարներ, այդ թվում՝ նաև հեռախոսակապի և ինտերնետ հասանելիության ծախսեր, տնտեսական և գրասենյակային այլ ծախսեր, գնահատված ծախսեր 27,440,000 դրամ: Իրականացման ժամկետն է՝ 2023 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
	21. Գործուղման ծախսեր՝ հյուրանոցային ծառայություններ, տրանսպորտային ծառայություններ, ավիատոմսեր և օրապահիկներ, որը նախատեսված է կազմակերպչական աշխատակազմի, ծրագրի ղեկավար անձնակազմի համար, աշխատակիցների միջազգային և տեղական գործուղումներ (հանդիպումներ արտասահմանյան գործընկերների հետ, ծրագրի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման, փորձի փոխանակման նպատակով), գնահատված ծախսեր՝ 20,124,571 դրամ: Իրականացման ժամկետն է՝ 2023 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:

		22. Տրանսպորտային ծառայություններ, վառելիք, լոգիստիկ ծախսեր, մաքսային, բրոքերային և այլ միջնորդական ծառայություններ, գնահատված ծախսեր՝ 70,000,000 դրամ: Իրականացման ժամկետն է՝ 2023 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
		Ընդհանուր 2,885,223,071 դրամ
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների նկարագիրը	1. Նախագծման, պլանավորման և փոխկապակցված այլ մասնագիտական աշխատանքներ և ծառայություններ՝ 80,000,000 դրամ: 2. Շինարարական, շարժական և անշարժ գույքերի, այդ թվում՝ գոյություն ունեցող շինությունների, վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ՝ 1,615,900,000 դրամ: 3. Ծառատեսակների և տնկիների, ադմինիստրատիվ կենտրոնի, բացօթյա սպորտային հանգստի գոտու, այգեգործական դպրոցի, արվեստների և արհեստների բազմաֆունկցիոնալ կենտրոնի, մանկական հասարակական խաղային գոտու, ինչպես նաև այգու հանդիսավոր բացման արարողության համար սարքավորումների, նյութերի և ապրանքների ներմուծում՝ 695,000,000 դրամ: 4. Ջվարճահարմարանքների (կարուսելներ) և այլ մանկական և երիտասարդական սարքավորումների պահեստավորման, տեխնիկական զննման ծառայություններ, արտաքին տեսքի արդիականացման և բարելավման, տեղադրման (մոնտաժման) աշխատանքներ՝ 30,000,000 դրամ: 5. Այգու հանդիսավոր բացման կազմակերպմանն ուղղված ծառայություններ՝ 50,000,000 դրամ: 6. Հանրային իրազեկման և մարքեթինգային, տպագրական և դիզայներական ծառայություններ՝ 50,000,000 դրամ: 7. Խորհրդատվական ծառայություններ՝ 28,000,000 դրամ: 8. Տրանսպորտային ծառայություններ, լոգիստիկ ծախսեր, մաքսային,

		բրոքերային և այլ միջնորդական ծառայություններ՝ 65,000,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	1. Վարչական աշխատակիցների աշխատավարձը և ֆիզիկական անձ կազմակերպչական ծառայություններ մատուցողների վարձատրություն՝ 161,536,000 դրամ: 2. Վարչական գրասենյակների, տարածքների վարձակալություն, կոմունալ, պահնորդային, սանիտարական աշխատանքների, կապի, ինտերնետային ծառայություններ՝ 27,440,000 դրամ: 3. Գործուղման ծախսեր՝ հյուրանոցային ծառայություններ, տրանսպորտային ծառայություններ, ավիատոմսեր և օրապահիկներ, որը նախատեսված է կազմակերպչական աշխատակազմի, ծրագրի ղեկավար անձնակազմի համար՝ 20,124,571 դրամ: 4. Ներկայացուցչական ծախսեր՝ 50,500,000 դրամ: 5. Վառելիք՝ 5,000,000 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	1. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ, 2. Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, 3. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարություն (այդ թվում՝ Տուրիզմի պետական կոմիտե), 4. Շիրակի մարզպետարան, 5. Գյումրու համայնքապետարան, 6. Այլ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, 7. Համաշխարհային բանկի Հայաստանի ներկայացուցչություն, 8. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

		(համագործակցություն Ծրագրի ընդհանուր նպատակների իրագործման հետ կապված իրականացվող աշխատանքների շրջանակներում):
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրություն	Զբոսաշրջության և քաղաքաշինության բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

07.11.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ